

*Է. Ներսիսյան*

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավարական խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ պարոն Գ. Բաղդամյանին

Տիկին Ն. Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Գ. Բաղդամյան

*Գ. Բաղդամյան*

« 12 » 06 2024թ.

**ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

**1. Աշխատակիցների անունները, ազգանունները՝**

- Սեդա Շահինյան,
- Սամվել Պետրոսյան,
- Թամարա Արշակյան,

**2. Զբաղեցրած պաշտոնը –**

- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամ
- հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության լիցենզավորման բաժնի պետ,
- հանձնաժողովի գործերի կառավարման վարչության քարտուղարության պետ,

**3. Գործուղման վայրը և ժամկետները – Աթենք (Հունաստան),**

համապատասխանաբար 2024 թվականի հունիսի 3-ից 7-ը.

**4. Հրավիրող կողմը (առկայության դեպքում) –** Էներգետիկ համայնքի քարտուղարության Էներգետիկայի եվրոպական կարգավորողների խորհուրդ (ECRB):

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը) – Էներգետիկ համայնքի կարգավորող խորհրդի (ECRB) էլեկտրաէներգիայի աշխատանքային խմբի 62-րդ հանդիպմանը և Էներգետիկ համայնքի էլեկտրաէներգիայի 29-րդ համաժողովին մասնակցություն.

**5. Քննարկված թեմաները (հարցերը) –** էլեկտրաէներգետիկական շուկաների

զարգացումները Էներգետիկ համայնքում և ԵՄ-ում.

**7. Հանդիպումները, ելույթները. – Էներգետիկ համայնքի կարգավորող խորհրդի էլեկտրաէներգիայի աշխատանքային խմբի 62-րդ հանդիպումը** սկսվեց նախորդ հանդիպման արձանագրության հաստատմամբ, որից հետո խորհրդի կողմից ներկայացվեցին ԵՄ-ի և Էներգետիկ համայնքի էլեկտրաէներգետիկական շուկաներում տեղի ունեցած իրադարձությունները:

Ավստրիայի և Իտալիայի կարգավորողների ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի նշանակման (NEMO) մրցակցային (Ավստրիա) և մենաշնորհային (Իտալիա) մոդելները: Ավստրիական մրցակցային մոդելը ենթադրում է նաև շուկայի օպերատորների համատեղ գործունեություն: Արդյունքում հեշտանում է երրորդ անձանց մուտքը շուկա, օպերատորները մրցակցում են շուկայի կառավարման ծրագրում և քլիրինգային գներում, բարելավվում է ծառայության որակը: Ավստրիական E-Control-ը հանդիսանում է ազգային կարգավորող, որը պատասխանատու է նաև շուկայի օպերատորի նշանակման, նշանակման չափանիշներին համապատասխանության մոնիթորինգի համար: Կարգավորողի համար փորձություն է հանդիսանում արդյունավետ կարգավորումների մշակումը օպերատորի նշանակման պրոցեսում, գործարքներում պրոֆեսիոնալ ներգրավված անձանց (persons professionally arranged in transaction) աուդիտը, կարգավորողի կողմից մարդկային ռեսուրսի ներգրավումը: Նշվեց նաև, որ ԵՄ 2015/1222 կարգավորման համաձայն՝ այլ ԵՄ երկրում նշանակված օպերատորները ևս իրավունք ունեն ծառայություն մատուցել Ավստրիայի օր առաջ և օրական շուկաներում: Իտալիայի կարգավորողը նշեց, որ Իտալիայում օպերատորի մենաշնորհ լինելու հանգամանքով պայմանավորված՝ ծառայության մատուցման գները սահմանվում են կարգավորողի կողմից: Գները ներառում են հետևյալ բաղադրիչները՝ գործունեություն, բաժանելի ֆունկցիաներ (shared functions) և ընդհանուր ծառայություններ:

Շեշտվեց էլեկտրաէներգետիկական շուկաների ազատականացմանը համընթաց տվյալ շուկաների օպերատորների ազդեցության աճը, կարևորվեց նաև նրանց շուկաների վերաբերյալ պատմական տվյալների գոյությունը՝ որը շուկան ավելի կանխատեսելի է դարձնում: Ներկայացվեցին տվյալ շուկայի օպերատորներին ներկայացվող պահանջները համաձայն ԵՄ 2015/1222 կարգավորման:

Այնուհետև, մի շարք երկրների, ինչպես նաև Հայաստանի ներկայացուցիչների կողմից ներկայացվեցին տվյալ երկրի շուկայում տեղի ունեցած օրենսդրական փոփոխությունները: Հանդիպման ընթացքում տեղի են ունեցել ծավալուն քննարկումներ ներկայացված թեմաների վերաբերյալ՝ հարց ու պատասխանի ձևաչափով:

Ուշագրավ էին հատկապես հետևյալ երկրների ներկայացուցիչների ելույթները.

**Վրաստան.** Էներգետիկ համայնքի և EU4ENERGY ծրագրերի ղեկավարությունների կողմից տեխնիկական աջակցություն է իրականացվում Էներգետիկ համայնքի էլեկտրաէներգիայի փաթեթի (ԵՄ էլեկտրաէներգիայի 4-րդ փաթեթի Էներգետիկ համայնքի առանձնահատկությունների հաշվառմամբ տարբերակ)՝ տրանսպոզիցիային ազգային օրենսդրությունում ներառելուն: Իսկ կարգավորող մարմնի և կայուն զարգացման նախարարության աջակցությամբ մշակվում է վերականգնվող աղբյուրներից էներգիայի ստացման խրախուսման և օգտագործման մասին օրենքի նախագիծը, որով կներդրվեն էլեկտրաէներգիայի ծագման երաշխիքի և կանաչ սերտիֆիկատների տրամադրման մեխանիզմները: Նախաձեռնվել է գործընթաց net-metering-ից net-billing համակարգ անցնելու ուղղությամբ:

Օր առաջ շուկայի բացման ժամկետը կրկին երկարաձգվել է մինչև 2024 թվականի հուլիս ամիս:

**Մոլդովա.** փոփոխություններ են կատարվել վերականգնվող ռեսուրսներով էներգիայի արտադրության խրախուսման մասին օրենքում, որով ներդրվելու է էներգիայի ծագման աղբյուրի ինստիտուտը, ինքնավար արտադրողների համար գործելու է net-billing աջակցության սխեման: Տվյալ սխեմայով կառավարությունը սահմանաչափ է բացել 100 ՄՎտ տեղակայվող հզորության չափով մինչև 31.12.2025 թվական, որից կօգտվեն տվյալ աջակցության սխեմայի շահառուները: Ինչ վերաբերում է net-metering սխեմային, ապա հետագայում դա կտարածվի միայն նրանց վրա, ովքեր օգտվում են ներկայումս տվյալ սխեմայից, և որի վերջնաժամկետ է սահմանվել մինչև 31.12.2027 թվականը: Օրենքի նախագիծ է մշակվում նաև REMIT-ի ազգային օրենսդրության մեջ ներառելու, շուկայի օպերատորի նշանակման և արտակարգ իրավիճակների վերաբերյալ օրենսդրություն ներդնելու համար: Ինչ վերաբերում է միջպետական առևտրին, ապա կարգավորողը ներկայումս մշակում է հզորության օրական տեղակայման կանոններ, ինչպես նաև տարեկան, ամսական և օրեկան տեղակայում մոլդովա-ուկրաինական սահմանին:

**Սերբիա.** Սերբիայի և Հունգարիայի միջև կնքվել է փոխըմբռնման հուշագիր, որտեղ մասնակցում են նաև համակարգի և շուկայի օպերատորները, որի հիման վրա անցում է կատարվել շուկաների միասնականացման վերջնական փուլ, որից հետո էլ կիրականացվի առևտուր Սերբիա-Հունգարիա սահմանին: Աշխատանքային խմբերը գնահատել են վերոնշյալի հետ կապված բոլոր ռիսկերը, և վերոնշյալ ծրագրի իրականացման

նախապայման է հանդիսանում Սերբիայի կողմից ԵՄ 2015/1222 կարգավորումը ազգային օրենսդրությունում ներառելուն:

**Մոնտենեգրո.** Էներգետիկ համայնքի կողմից տեխնիկական աջակցություն է իրականացվում Էներգետիկ համայնքի էլեկտրաէներգիայի փաթեթը (ԵՄ էլեկտրաէներգիայի 4-րդ փաթեթի Էներգետիկ համայնքի առանձնահատկությունների հաշվառմամբ տարբերակ) ազգային օրենսդրության մեջ երառելու նպատակով: 2024 թվականի մայիսի 8-ին ազգային կարգավորողը Իտալիայի ազգային կարգավորողի հետ կնքել է փոխըմբռնման հուշագիր, որով կողմերը փորձելու են հասնել հզորության ռեգիոնալ տեղակայմանը և հաշվարկին: Այդ նպատակով սկսվել է նաև հզորության տեղակայման հաշվարկի մեթոդոլոգիայի մշակումը երկրների հաղորդող օպերատորների կողմից:

**Ուկրաինա.** Իրավիճակով պայմանավորված պարզեցվել է նոր արտադրական հզորությունների միացման գործընթացը, կրճատվել է պահանջվող փաստաթղթերի ցանկը, նվազել են պահանջները և ծախսերը: Մշակվում է նաև գազով աշխատող պիկային կայանների համար պարզ միացման հնարավորություն, որպեսզի իրական ժամանակում հաշվեկշռվի վերականգնվողի կտրուկ աճը:

REMIT կիրառման նպատակով կարգավորողի կողմից ընդունվել են բոլոր ենթաօրենսդրական ակտերը: Հաշվի առնելով գների մեծ տատանվողականությունը՝ կարգավորողի մեթոդիկայի համաձայն բարձրացվել են առաստաղային գները (price cap):

Երկրի կողմից փորձ է արվում ներդնել էներգիայի ծագման աղբյուրի ինստիտուտը, որով պայմանավորված իրականացվելու է կանաչ սերտիֆիկատի առևտուր, որի արդյունքում փորձ է արվելու կրճատել վերականգնվողի բնագավառում դրված հանրային ծառայության պարտավորության իրականացումը: Օրենսդրությունը պետք է թույլ տա շուկայի նոր մասնակիցների՝ պահուստային հզորությամբ, ագրեգատորների, ակտիվ մասնակիցների և փակ բախշման ցանցերի անխոչընդոտ ներգրավումը, որի համար պետք է լինեն կայուն և հստակ կանոններ: feed-in սակագնի փոխարեն անցում պետք է կատարվի feed-in premium մեխանիզմին:

### **Էներգետիկ համայնքի էլեկտրաէներգիայի 29-րդ համաժողով.**

Համաժողովում ներկայացվեցին էներգետիկ համայնքում իրականացվող իրադարձությունները, սպասվող փոփոխությունները և տեղի ունեցան պանելային քննարկումներ առանցքային խնդիրների, ԵՄ օրենսդրության տրանսպոզիցիայի ընթացքում առաջացած խոչընդոտների և այլ թեմաների վերաբերյալ (հարց ու պատասխան):

Համաժողովը ընդգծեց շուկայական մեխանիզմի վրա հիմնված աջակցության սխեմայի շրջանակում տարբերությունների պայմանագրի (contract for differences) կնքման կարևորությունը՝ 2030 թվականի ամբիցիոզ թիրախներին հասնելու համար: Ամեն դեպքում, կարելի է մշակել մասնակի աջակցության սխեմա, երբ հասույթի մի մասը ընկերությունը կարող է ստանալ շուկայական առևտրի արդյունքում, որի դեպքում ծրագիրը ևս կունենա վարկունակություն:

Համաժողովը կրկին ճանաչեց, որ վերականգնվող էներգիայի (հզորության) առուվաճառքի պայմանագիրը դեռևս ներկայում հանդիսանում է էներգետիկ համայնքի առանցքային բիզնես մոդելը, բայց այն նվազեցնում է շուկայի լիկվիդայնությունը՝ ստեղծելով բարձր ֆինանսական ռիսկ և օրենսդրության ցածր կիրառական գործակից համայնքի երկրներում: Հաշվի առնելով նշվածը՝ Համաժողովը կոչ արեց կողմերին ավարտել էլեկտրաէներգիայի կազմակերպված շուկայի ստեղծումը և լիկվիդայնության բարձրացման նպատակով միանալ ԵՄ շուկային:

Համաժողովը ընդունեց, որ էներգիայի ծագման աղբյուրի ինստիտուտի ներդրումը անհրաժեշտ է, որպեսզի հաստատվի վերականգնվող էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագրի առարկա հանդիսանալը, որն էլ իր հերթին կապահովի թափանցիկություն ու կնպաստի միջպետական առևտրին տվյալ էլեկտրաէներգիայի մասնակցությանը:

Համաժողովը մեկ անգամ ևս կարևորեց պահուստային հզորության տեխնոլոգիաների ներդրումը շուկայում՝ որպես վերականգնվող էներգիայի տատանվողականության դեմ միջոց: Այդ կերպ կբարձրացվի նաև ցանցի հուսալիությունը: Իսկ լրացուցիչ եկամտի աղբյուրը կօգնի այդ ծրագրերի կյանքի կոչմանը: Իսկ միջսահմանային առևտրի իրականացումը ԵՄ և հարևան երկրների միջև կհանգեցնի ռեսուրսների օպտիմալացման և այլ տեսակի գործիքների կիրառմանը: Հետևաբար, Համաժողովը կոչ արեց էներգետիկ համայնքի պայմանագրի կողմերին սահմանել ծագման աղբյուրների ճանաչման չափանիշներ նաև ԵՄ-ում:

**8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը** – հետագա համագործակցություն և էլեկտրաէներգիայի աշխատանքային խմբի դասընթացներին մասնակցություն:

**9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները** -

Առաջարկվում է ՀՀ էներգետիկայի բնագավառի զարգացման ռազմավարական ծրագրի (մինչև 2040 թվականը) իրագործումն ապահովող ծրագիր-ժամանակացույցով նախատեսված «Էլեկտրաէներգետիկայի մասին» և «Էներգախնայողության և վերականգնվող էներգետիկայի մասին» օրենքների նախագծերի մշակման ժամանակ հաշվի առնել ԵՄ կարգավորումներով նախատեսված մուտքի իրավունքի, սպառողներին մատակարարման անխափանության (այդ թվում խոցելի սպառողների պաշտպանության), աջակցության մեխանիզմների, պահուստային հզորությունների վերաբերյալ և այլ դրույթները:

ԵՄ վերոնշյալ կարգավորումների կիրառումը, առանձին հարցերի քննարկմանը ՀՀ ներկայացուցիչների ներգրավումը կնպաստի հետագայում նշված կարգավորումներով սահմանված շուկայական մեխանիզմների ներդրումը Հայաստանում, ինչը կխթանի էլեկտրաէներգետիկ շուկայում մրցակցության զարգացմանը և կհանգեցնի արդյունավետության բարձրացմանը:

Գործուղվող

(ստորագրությունը, ամսաթիվը)

**Ս. Շահինյան**

Գործուղվող

(ստորագրությունը, ամսաթիվը)

**Ս. Պեպրոսյան**

Գործուղվող

(ստորագրությունը, ամսաթիվը)

**Թ. Արշակյան**

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ**

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը  
Հրաման 460-ՀՆ, 29.05.2024թ., Հրաման 458-ԳՔ, 27.05.2024թ.

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ Սեդա Շահինյանի՝ 03-07.06.2024 թ.

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի իրավաբանական և լիցենզավորման վարչության լիցենզավորման բաժնի պետ՝ Սամվել Պետրոսյանի՝ 04-07.06.2024 թ.

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի գործերի կառավարման վարչության քարտուղարության պետ՝ Թամարա Արշակյանին՝ 03-07.06.2024 թ.

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը ք. Աթենք / Հունաստան /

5. Գործուղման ժամկետները

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը  
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը  
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

Վ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը


բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Սեղա Շահինյան	Սամվել Պետրոսյան	Թամարա Արշակյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհաձայն	Ավիաժառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	10,033			10.03
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	200,657			200.657
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով եվրո)	119			
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	43,716			
	Օրերի քանակը	4			
	Ընդամենը (դրամ)	174,865	-	-	174.865
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով եվրո)	93	93	93	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	39,061	39,090	39,090	
	Օրերի քանակը	5	4	5	
	Ընդամենը (դրամ)	195,305	156,359	195,449	547.112
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար				
	Մուտքի արտոնագրի վճար		12,600		12.600
	Այլ ծախսեր (նկարագրել)				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		580.860	168.959	195.449	945.267

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ



17.06.2024թ.

